



ԼՐԱԳԻՐ

Պոստի հմր. ծախելան 150դ. կանխ
վեցանեսայ 80
Գուտանայ հմր. ծախելան 180
վեցանեսայ 100
Մեկ քիւր
Մանուկանդ տողը 2

Դուրս գացած լրագրաց համար ծախքը
Խմբագրութեան վրայ է
Լրագրաց վերաբերեալ համայն կամ որ եւ
իցէ գրութիւն Խմբագիր-Տնօրէնի
պատիւ ուղղուի. եւ համար ծախքն ալ
դիտողին վրայ է

ԱՊՐԱՅԻՆԸ ԲԱՆԱԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ՅՈՒՍԱՆԴԵՐՈՒԹՅՈՒՆ 14 ՅՈՒՆԻՍ 1866

ԲԱՆԱԳՐԱԿԱՆ

Այս քիւր հեռագրութեան երկու կա-
րէն իրողութիւն կը ծանուցանեն. խաղա-
ղութեան նախաշնորհ պայմաններուն Վառ-
րիայէն ընդունուելը, և Վերական ծովուն
մէջ յուլիս 20-ին օրը եղած նաւամարտը, ու
յուն մէջ երկու կողմն ալ յաղթութիւնն
իրենց կը սեփականեն. Հաշտութեան հա-
մար Բրուսիոյ և Խաղաղ աւազարկած
պայմաններն արդէն ծանօթ են մեր ընթեր-
ցողաց. բայց աւանց զիմանալ թէ Գաղ-
ղիա անոնց ո՞րն ընդունեն կամ ո՞րը մերժե-
րէ, և թէ Բրուսիա և Խաղաղ ի՞նչ աւ-
տիւնս զիջուցած են իրենց խիստ պահան-
ջութեանը, եւրոպական ամեն լրագրաց մէջ
գրաւէս հաստատուած կը տեսնուի թէ
Բրուսիոյ նպատակն է զՎառրիա Գերմա-
նիայէն արտաքսել, և գերմանական դաշնակ-
ցութիւնն այն հիմանց վրայ վերահաստա-
տել, զորս պատերազմէն յառաջ Բրուսիոյ
գետաւոր Ֆրանքֆորթի աւազածողովն
ներկայացուցած էր, բայց աւազածողովն չէր
ընդունել և պատերազմ հրտարակեր էր,
ինչպէս որ ժամանակին ծանուցիւր ենք. Բա-
նի մը լրագիրներ կը հաստատեն նաեւ որ և
թէ Բրուսիա իր նպատակին համար, ոչ մի-
այն գերմանական տէրութիւններն իր երկ-
րին հետ միացնելու միտք չունի, այլ և
արդէն գրաւած երկիրներն ալ իրենց վե-
հասնանայ դարձնել և զՎառրիա գորս
ձգելուն փոխարէն հարաւային Գերմանիոյ
մէջ Պոլիէրայի տէրութիւնը մեծցնել
կուզէ, թէ և այս վերջինն իր դէմ պատե-
րաղ հրտարակելով Վառրիոյ կողմը բրու-
նած է հիմա:

Սեր ընթերցողք մնացած չին անշուշտ
որ գերմանական դաշնակցութեան վերանա-
րդման համար Բրուսիոյ կողմնէ Գաղա-
ֆորթի աւազածողովն ներկայացած աւա-
շարկութեան մէկ գլխաւոր արտադրու-
թիւնն ալ այն էր, որ բոլոր գերմանացոյ
ազգի ընդհանուր քուէարկութեան ընտ-
րուած երեսփոխաններէ բաղկացեալ գեր-
մանական մեծ խորհ. դարան մը կազմուի.
Պ. Տը Պիլզնը այս առաջարկութիւնը
գերմանական տէրութեանց ալ անունին
ներկայացուց, և թէպէտ շատերը զայն մեր-
ժեցին, բայց կը հորձուի որ Գերմանիոյ
ժողովուրդներն իրենց տէրութեանց բռնած
ընթացքէն դէպ չեն, և Բրուսիոյ ըրած ա-
ւաշարկութիւնը կընդունին:

Բանի որ ասիա ին գնուց բաղդը գեր-
մանական Վառրիա ողովն ստուերականիչ
խանութիւնը տապալած չէր, այս խնդիրն

ալ բնաւորաբար եւ ձգուած էր. բայց
այսօր երբ Բրուսիոյ բանակները մէկ կողմէն
մեծամեծ յաղթութիւններով Ալեքսանդր
դէններն հասած և Վառրիոյ կայսրութիւ-
նը կործանման վիճին կը դրոշմէ հասուցած են,
միւս կողմէն երբ Գաղափէրի քով Պոլիէ-
րայիներուն և Լաշիէնայի թիւ ալ գեր-
մանական դաշնակցութեան պօրայ ահա
գին հարուածներ տուած են, և երբ գեր-
մանական Վառրիա ողովն փոխադարձ
ըրած և յաղթանակաւ Ֆրանքֆորթ մը-
տած են, ալ արդէն չէր մնար Բրուսիոյ
իր աւազարկութիւնը զորձաբերելու. Ուս-
տի Գերմանական խորհրդարան մը կազմե-
լու համար Բրուսիա թէ իր երկիրներուն և
թէ գրաւած տէրութեանց մէջ Գերմանա-
ցիները կը հրաւիրէ որ երեսփոխաններ ընտ-
րեն. Կոյն հրաւերը կրնէ նաեւ իրեն դաշ-
նակից հիւսիսային Գերմանիոյ տէրութեանց
որք ամենայն յօժարութեամբ ընդունելով
երեսփոխանաց ընտրութեան կ'սկսին:

Արեւմտ միւլդեա մէկ կողմէն հաշտու-
թեան բանակցութիւններ կըլան, միւս կող-
մէն Գերմանական խորհրդարանն ալ Պէր-
լին կը գումարի, և գետաւորներ խաղա-
ղութեան դաշնակցութեան չինքս, մեծ
ազգի մ'երեսփոխանութիւնն ալ իր կամքը
յայտնելու կը հրաւիրուի. Եսկէ ետքը
տարի աւաջալ ձիւք նոյն դէպքը պատա-
հեցաւ Խաղաղ մէջ. Յուլիի դաշնադ-
րութիւնն Խաղաղան խնդիրը որդէս թէ
լուծել, բայց խաղաղացոյ ազգին երեսփո-
խանները Թուրին գումարակցան և ուրիշ
կերպ որոշումներ ընելով Յուլիի դաշնադ-
րութիւնն ի գերեւ հանեցին. Ժողովուրդն
կառուածն յաղթել սկսած օրէն ի վերջոյ
րութեանց և գետաւորացիաց կընքած դաշ-
նակցութեան իրենց հին պօրութիւնը կորուստ-
են, ինչպէս որ օրինակներն ամեն օր կը
տեսնենք:

Եւս այս պատճառաւ հաշտութեան
նախաշնորհ պայմանները պատերազմող տե-
րութեանց կողմնէն ընդունուելէ ետեւ ալ
գործը չմնար, այլ սակայն մեծամեծ
գէպքեր կրնան պատահիլ. Տեախան հաշ-
տութիւն մը հաստատուելու համար Եւրո-
պական տէրութիւնները գետաւորացիութիւն
կրնան ընել, ինչպէս որ կրտսի. բայց ասոր
հետ ի միասին ժողովուրդն ձայնի ալ արհա-
մարհիւլ չէ. գետաւորներուն ու գետադ-
նաժողովներուն բռնիչը ընթացից հետը
կատելու է նաեւ թէ ի՞նչ պիտի ընէ Գեր-
մանիոյ նոր խորհրդարանը:

Եւ այժմ ներկայ պայագրաց մէջ շե-
նորհակալ ըլլալու ենք չէ՞նք տէրութեանց
հաշտարար քաղաքականութենէն, որք իրա-

րութեմ ունեցած հին տաղաւթիւնն
մտնալով աշխարհի խաղաղութիւնն ապա-
հովելու հոգ կը տանին. Եւզղիա, Գաղղիա
և Ռուսիա պատերազմող տէրութեանց մէ-
կուն կամ միւսին կործր բռնելով կընային պա-
տերազմն ընդհանրացնել, բայց խաղաղու-
թիւնն իրենց մտնաւոր շահերէն նախաձե-
ծար համարելով պատերազմի աղետից վերջ
տալու և ապագային մէջ ալ առաջին առ-
նելու հաշտարին:

Բախուցողէն ու Ալեքսանդր յուլիս 21
թուով հեռագրութեան կը ծանուցանեն թէ
խաղաղացոյ նախախուժը խաղ կըլին ուր-
բախտելով. Վառրիացոյ նախախուժը
վրայ հասեր, և կատարի նաւամարտ մ'եմեւ
խաղաղացոյ Ուէ Երթալի անուն զրահա-
ւոր Ֆրանքֆորտն ընկողն և ուրիշ մէկ զրա-
հաւոր շոգենաւն ալ բռնկելով օդն ելեր է.
Ուրիշ քանի մը նաւեր ալ չարաչար փառ-
ուելով, խաղաղան նաւախուժին Երթոն
քաղաքէն է:

Իսկ աւազարկացոյ միայն Բալթիկ ա-
նուն կրկնադար կը ծանր կերպով փաստուեր է:

Ինչպէս որ կը տեսնուի, այս լուրը
Ֆրանքիայէն եկած հեռագրին բոլորովն
հակառակն է:

Եւս հակառակեանց ո՞րն ստաց ըլլալը
հասկնալու համար ետքին զայլք տեղեկաւ
թեանց պէտք է սպասել:

Փորթէն յուլիս 23 և 24 թիւերով ե-
կած հեռագիրներն ալ կը ծանուցանեն թէ
հաշտութեան նախաշնորհ պայմաններն Վա-
ռրիայէն ընդունուելով բրուսիացոյ և
աւառիացոյ կողմնէ լրագր գետաւորներ
որոշուեր են վեց շաբաթուան զինադադար
մ'ընելու համար բանակցելու:

ՀԵՌԱԳԻՐ

Փորթ 24 յուլիս

«Սոխիթեա լրագիրը կը ծանուցանէ
թէ Խաղաղ ալ զինադադարն ընդունել է:

«Երէկ ընտրական խաւանքն ընդար-
ձակելու խնդրոյն համար մեծ զոյց մ'եղաւ
Լոնտայի և Հայարաքի մէջ, և խաղաղ-
ութիւն ծաղկելով աստիճանութեան բաղմա-
թիւ տեսուչներ վիտաւորեցան:

Ալեքսան 22 յուլիս

«Եւս մեր երկրորդ զորաւանակը Թըշ-
նովն Բրէսլաւ քիւն հաղածեց և քաղաքն
ալ զրաւեց, որ գետադադարի միջոցին աւա-
րիական զօրաց ձեռքը պիտի մնայ:

Ալեքսան 22 յուլիս

«Կոն Տեկէնթէլո զօրապետը, կոմս
Բորթի և Պարոն Պրենտ Ալեքսան Եր-
թալուրի բրուսիացոյ բանակի կեդրոնը

գային վեց շաբաթուան զինադատար մ'ը-
նելու համար բանակցելու :

Պուրէշ 22 յուլիս :

« Թիւր զօրապետը Բրուսիլոյ և Խաւ-
լեոյ կառավարութեանց կողմէն յատուկ պաշ-
տօնով (Հունգարիան ոտք հանելու համար)
հոս հասաւ, և Բրուսիլոյ հիւպատոսին, կա-
ռավարութեան անդամներէն ոմանց, և քա-
նի մ'ալ ապաստանեալներու հետ խօսքը-
նակցութեամբ պիտի դործէ : Հիմա հոս-
կէց Ռուսիոյ գնաց :

« Մուրո-Ալաքիլոյ կառավարութիւ-
նըն յայտարարութիւն ըրաւ. Պաղլեոյ և
Եւստրիոյ հիւպատոսներուն թէ թոյլ չպի-
տի տայ որ Թիւր զօրապետը երկրին մէջ
կամաւոր զինուորներ դրէ : »

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ Մէվլուտի (տաճկաց Մարգա-
րէին ծննդեան) տօն ըլլալով, ըստ սովորու-
թեան առջի գիշերը լուսավառութիւն ե-
ղաւ, թնդանթներ արձակուեցան և տէրու-
թեան նաւերը զարդարուեցան, և երէկ այս
պատճառաւ տէրութեան բոլոր պաշտօնա-
ւանները գոց էին :

Օգոստոսիաւ Ինքնակալը մեծ հանդի-
սիւ Պէյլէյլէյի միջինթը գնաց կրօնական
արարողութեանց ներկայ գտնուելու :

Կայսերական հրամանաւ

Բարձրագոյն ատենի զիւանին պաշա-
նատարներէն Սուլթանի փաշան Բիւսի
գայմագամ անուանեցաւ Միրմիրանի ա-
ւանանաւ :

Քուսիէ տ'Օոսան լրագիրը կը ծանու-
ցանէ թէ Պարատաղէն պատգամաւորներ ե-
կեր են, որք քանի մը խնդիրներ ունին ե-
ղեր Բ. Դրան ներկայացնելը, որոց մէկն
է, կրէ, Երբիական ծովուն վրայ փոքրիկ
նաւահանգիստի մը շնորհմամբ, որպէս զի վա-
ճառականութիւններն զարգանայ :

ԱԶԳԱՅԻՆ

Երեքշաբթի օրը եկեղեցական վիճակա-
յին ժողովը Պուլմալիուի Մայր եկեղեցին
գումարուելով՝ Ս. Լիւթիմիանի կաթողիկո-
սական ընտրելեաց ցուցակը պատրաստեց
գաղանի քուարկութեամբ : Եւաւելագոյն
քուէ ստացողներն եղան հետեւեալ եօթն
բարձրատիճան եկեղեցականք :

Քուէ

- Տ. Գեորգ Երեւանիսկոյոս Պրուսայու 31
- Տ. Պողոս Ս. Պատրիարք Կ. Պոլսոյ 30
- Տ. Իգնատիոս Երեւանիսկոյոս Վ. անայ 26
- Տ. Թադէոս Երեւանիսկոյոս (Թէքլիտ) 20
- Տ. Երիստակէս Երեւանիսկ. Իւստիւլա 19
- Տ. Եսայի Ս. Պատրիարք Երուսաղէմի 18
- Տ. Մակար Երեւանիսկոյոս Տիւրիսու 16

Վիճակային ժողովն այս առաջին դօր-
ծը կատարելէ ետեւ, Սոյ և Եղթամարայ
աթոռոց խնդիրը ձեռք առնելով, Սոյ Նի-
կողոս եպիսկոպոսին և Եղթամարայ Խաչա-
տուր եպիսկոպոսին կաթողիկոսանալն եկեղեց-
ւոյ օրինաց և կանոնաց հակառակ և հետե-
ւաբար անվաւեր վճռեց, և այս երկու ա-
թոռոց համար մէկ մէկ օրինաւոր գահակալ
ընտրուելու համար՝ գաղանի քուէարկու-
թեամբ երեքական ընտրելի որոշեց, որք են՝

Սոյ Եթոռին համար

Տ. Ներսէս եպիսկոպոս Վարժապետեան

Տ. Երիստակէս եպիսկոպոս Եւանայու
Տ. Յօսաննէս եպիսկոպոս Եղեւսեան :

Եղթամարայ Եթոռին համար

Տ. Յակոբ եպիսկոպոս Թօփուղեան
Տ. Մկրտիչ վարդապետ Խըրքմեան
Տ. Երեմիա վարդապետ Մշոյ և Բաղէշու :

Վիճակային ժողովն Սոյ և Եղթա-
մարայ աթոռոց համար ընտրելեաց ցուցակ
պատրաստելու ձեռնարկութիւնը՝ ինչպէս կը
տեսնուի՝ համաձայն չէ Վաթիկոսական
Յանձնաժողովոյ տեղեկագրին տրամադրու-
թեանը, որ է երկուքին ալ միաբանութեանց
կողմէն ներկայացուած օրինաւոր ընտրելեաց
ցուցակի մը մէջէն ընտրել իւրաքանչիւրին
կաթողիկոսը, Բայց Վիճակային ժողովը նը-
կատելով որ յիշեալ երկու աթոռոց միա-
բանութիւններն այս միջոցիւ բացառիկ վի-
ճակի մը մէջ գտնուելով կարող չպիտի ըլ-
լան օրինաւոր ընտրելեաց ցուցակներ պատ-
րաստելու, որոշեց է ինքնին պատրաստել
այս անգամ յիշեալ երկու աթոռոց ընտ-
րելիներուն ցուցակները : այս ալ՝ ըստ մեզ՝
խիստ իրաւացի կը թուի :

Վաթիկոսական ընտրելեաց ցուցակն
ըննայալէս պատրաստուելէ ետեւ յըլուսաց-
ուի որ քիչ օրէն Տիւր հանուր ժողով գու-
մարուելով՝ վերջնական ընտրութիւնները կը
կատարուին :

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ենթալ շաբաթ իրիկուն օգոստոսիաւ
Ինքնակալը Օդ-Մէյաւանի դաշտին մէջ
ճաշեց, ուր նետաձգութեամբ դօսնելու գա-
յած էր :

Ն. Կ. Վ. Ե. հալաւութիւնը խիստ յա-
ջողակ է նետաձգութեան մէջ՝ ինչպէս իւր
փառաւոր յիշատակաց արժանի հայրը :

Մայրաքաղաքի քառանթիկայի վե-
րատեսչութիւնը լուր տալով թէ քօլէ-
ւան Մարտիկայի մէջալ երեւան եկեր է,
որոշեց որ յիշեալ նաւահանգիստէն եկող շո-
գեւաններն ալ 10 օր քառանթիկայ տրահեն
Չանագ-գալէ :

Վր լսեց թէ Վ. օսիորի նեղցին բե-
րանը Պէյլէյլէյ լեմանի առջեւ քառանթիկա
պահող նաւերուն թիւն արդէն 63ի կը հաս-
նի : Եւսչափ նաւերուն մէջ ընդամենը մէկ
քօլէւին մը պատահեց է կըսուի :

Հետեւեալ նամակը՝ Մանուէլեան Յակո-
բիկ աղային Եպիսկոպի կալուածոց խնդ-
րոյ վրայ ըրած փաստաբանութեանց մէկ
գլխաւոր կէտին գէմ բողոք և միանգամայն
ամենէն զօրաւոր կարծած հիման խախտա-
ւելաւուն նոր և անհրեքելի ապացոյց մ'է :

Յակոբիկ աղան յիշեալ կալուածոց
տիրաւորութիւնն արդարացնելու համար
փաստ բռներ էր թէ կալուածներն անխնամ
մնալով խաւանացեր են : Եւս նամակէն կը
տեսնուի թէ ոչչափ անտեղի և անհիմն է
եղեր այն աւարկութիւնը :

Վր լսեց թէ յիշեալ կալուածոց մա-
տակարարութիւնն ընող Տոյրաշեան Սեւ-
քոն աղան ալ անցեալ շաբթու Խառն ժո-
ղովին ներկայանալով մանրամասն տեղեկու-
թիւններ տուեր է նոյն կալուածոց անցեալ
և ներկայ վիճակներուն մեծ տարբերութեա-
նը վրայ, տեղեկութիւններ որք նոյնպէս բու-
լովովին կը հերքեն Յակոբիկ աղային վերո-
յիշեալ աւարկութիւնը :

... խմբագիր :

Մանուէլեան Յակոբիկ աղային այս անգամի
գրուածքն ինձի այնպէս երեւցաւ, որ նա այն

մարդիկներէն է՝ որ միաքերնին գրած են թէ իրա-
ւունք ձեռք բերելու համար խօսելու եւ գրելու
մէջ վերջինն ըլլալու է : Գուցէ նա մեր այս դըր-
ւածքէն առիթ առնելով այսպիսի դատաստան մը
մեր վրայ ընել ուզէ : Բայց կը փախաքիմ որ Յա-
կոբիկ աղայն պատուական լրագրոյդ ընթերցո-
ղաց հետ գիտնայ՝ որ մեր Միաբանութիւնն այս
ժանրակէտ նիւթոյն վրայ հրապարակի մէջ ոչ
խօսելու եւ ոչ գրելու միտք ունէր՝ եթէ ստի-
պողական հարկը չբռնադատէր զինքը : Եւ դո՛ւ
պիտի ըլլայինք այն բողոքոյն հրատարակու-
թեամբ, եթէ Մանուէլեանն իր չէ հաշտեցնելու
շարոյցն մէջ՝ միաբանութեան համետ եւ գոու-
շաւոր վարմունքէն պատկառելով՝ չխժքէր,
եւ անոր պաշտպանողական դիրքը չարհամար-
հէր : Եւս յիշեալ անուանելով գայն :

Ի վերայ այս ամենայնի դարձեալ չենք չեղիր
մեր գրուշաւոր դիրքէն, եւ բարեգործութեան
մը երեսէ Արմաշու վանաց կրած գրկանաց եւ հա-
րատահարութեանց համար առ այժմ կը լուսմը
ամենայն երկայնմութեամբ, մինչեւ որ
Միայն կը փախաքիմ որ Յակ. աղայն եթէ ինք
ստուգիւ խաբուած է, դո՛ւն պարագայ տեղը չաշ-
խատի զլրութիւն ազգին խաբելու անհիմն փա-
տաբանութեամբ, վասն զի աղաքակցոց ներկայ
վիճակը իր նկարագրածին հակառակն է՝ ասկից
հինգ տարի յառաջ պարտուց ներքեւ ձեռնած եւ
ամայի դարձած կալուածներն այսօր շատ մը կա-
րեւոր շինութեանց յաւելուածով բարգաւաճալ
եւ արդասաւոր վիճակի մէջ են հողերոյս Սոն-
փանոս Սրբաւանին քրտանց եւ Արմաշու վա-
նաց ձեռնկալութեան շնորհիւ : այնպէս որ Ս. Ե-
րուսաղէ մի միաբանութիւնը մեծագոյն բաղդ մը
բեռք բերելու վրայ է՝ ի նորոհ քրտանց Տեղա-
պա՛ս սրբազանին եւ զրկողութեամբ Արմաշու
վանաց Յուսանք որ Յակոբիկ աղան այլ
եւս չբռնադատեր զմեզ վերստին այս ժանրակե-
շիւ նիւթոյս վրայ խօսելու, կարծելով որ Արմա-
շու վանաց միաբանութիւնը եւս հաշտեցնելու
պատրաստ է իր իրաւունքը պաշտպանելու ատեն չի-
գաներ :

Խնդրելով որ այս նամակը պատուական լը-
րագրոյդ մէկ անիւնը դետեղէք, մնամ եւայլն :
12 յուլիս 1866 Ն. Ծ. Գեորգ Երեւանիսկ. Վ.
Ի կոստանդնուպոլիս Միքայիլ Երեւանիսկ.

... Խմբագիր Մասիս պատուական
լրագրոյ :

Վր խնդրեմք որ բարեհաճիք հրատարա-
տարակել ձեր պատուական լրագրոյն միջո-
ցաւ յետագայ խորհրդածութիւնս օրոյ հա-
մառօտ բովանդակութիւնը գրելով է բերանա-
ցի խօսեցանք երէկուան Վիճակային ժո-
ղովոյն մէջ՝ որ դոււմարուած էր կաթողիկո-
սական ընտրելեաց ցանկ պատրաստելու հա-
մար : Եթէ ձեր բաղմարդիւն լրագրի շնոր-
հիւ ընդունելութիւն գտնայ մեր խորհրդա-
ծութիւնն ի սիրելի աղգայնացս, նա մանաւանդ
Երեւանիսկական ժողովոյ ուշադրութիւն
գրաւէ արժանաւոր Վաթիկոսի մը ընտ-
րութեան մասին, անշուշտ հաւատացէք որ
Իսկապէս յարգած կը լինիք Եղլի օղուան
գոր կը սիրէք, պիտի և կը պարտաւորեք ըլ-
մեզ :

Մնամ ձեզ իտրաւ բարեմաղթու
1866 յուլիս 13 Երեւան վարդապետ
Ի Ղալաթիայ Ս. Լուսա :

Ամենապատիւ Սրբազան Հայր, եւ սրբա-
գումար ուխտ Հայաստանեայց եկեղեցւոյ :

Արդէն մէկ տարին շուտով կը լրանայ, որ ա-
մենայն Հայոց հայրապետական աթոռն զրկուած
իւր հայրապետէն, եւ կաթողիկոսութեան վի-
ճակ գրաւած ունի աղգայնացս խորին ուշադրու-
թիւն : Հայն կաթողիկոսութիւն կաղաղակ եւ
կաթողիկոս, եւ նորա աղիտորով ձայնի արձա-
գանք կը հնչէ՝ ի Ռուսաստան, ի Տաճկաստան,
ի Պարսկաստան, ի Հնդկաստան, ի Վրոստիա-
լաքիա, եւ յայլ հայաբնակ տեղիս, ուր վարատ-

եալ զաւակունք չայտնանեայց եկեղեցւոյ կը
փախաքին հանուր բարեկարգութեամբ ապա-
հովեալ տեանել իւրեանց կրօնական եւ ազգային
միութիւն :

Նրկար ժամանակէ՛ր վեր հրատարակութիւնք եւ
բանախօսութիւնք կը լինին այս մասին , ժողով-
ներ կը դուժարուին , Տեղեկագիրք կը հրատա-
րակուին , խնդիրներ կը յուղուին , եւ ամենք կը
սպասեն բարեօք կատարածին : Սերկեանս վիճա-
կային ժողովն ալ դարձեալ կաթողիկոսական
խնդրոյն համար է դուժարուած , Ուստի նուա-
սութիւնս ալ բարեպատեհ առիթ մը համարե-
լով կը վստահիմ չրաւիրել սրբադուժար ժողովոյդ
ուշադրութիւնը յետագայ խորհրդածութեանս
վրայ :

Ինչպէս յայտնի է , ներկայ ժողովոյս պաշ-
տօն է կաթողիկոսական ընտրելաց ցանկ պատ-
րաստել , եւ առաջարկել երեսփոխանական Ընդ-
հանուր ժողովին : Ներկայ ժողովոյս պաշտօն է
խորհիլ եւ ընտրել այն անձինք՝ որ ամենայն Հա-
յոց կաթողիկոսութեան արժանաւարտ ձիրք եւ
յատկութիւն ունին : Ազգ՝ որ ամեն ժամանակ ,
առանց ընտրելաց ցանկ ուղեւոր՝ ինքն է ընտ-
րեր արժանաւորները , այժմ իսկ՝ նոյնն եկեղեցա-
կան ուխտին է հաւատացեր . բայց եթէ լաւ մը-
տածենք , կը տեսնենք որ սաղմ այս վստահու-
թեամբ ամենամեծ եւ ծանրակշիռ պարտաւո-
րութիւն մը դրեր է եկեղեցական ուխտին վրայ՝
ինքնին իւր արժանաւորները ցուցնելու համար ,
ուստի եւ մեք պարտաւորեալ ենք ազգի մեր վը-
րայ ունեցած վստահութիւն հաւատարմութեամբ
պահել . եւ այնպիսիները ներկայացնել ազգի ընտ-
րութեան , որոց արժանաւորութեան մեր խղճի
ձայնիւ կրնամք վկայել :

Մեր պատմութիւն ցոյց կուտայ մեզ , որ կա-
թողիկոսական ընտրութիւն եւ նորա արժանա-
ւորութիւն միշտ եւ հանապազ եղած է ամենա-
փափուկ եւ կենսական խնդիր հայու համար :
Մարմնաւոր իշխանութեան եւ թաղաւորական
հարստութեան մասին այնչափ զգուշութիւններ
եւ համադրային խնդիր չունի յուզած ազգը , ինչ-
պէս իւր հոգեւոր իշխանութեան համար : Հայը ,
ազգովին թաղաւոր է ընտրեր , բայց իւր կաթո-
ղիկոս ազգովին է ընտրած : Հայը՝ իւր կենդանու-
թիւն , ազատութիւն , ուժ , եւ ազգային միութե-
թիւն իւր եկեղեցւոյ մէջ է տեսել . վասն զի հո-
գին առաւել համարելով քան զմարմին , զոհեր է
իւր թաղաւորութիւն հարստութիւն եւ մարմին ,
որ իւր հոգեւոր կեանք , իւր եկեղեցւոյ ազա-
տութիւն եւ անկախութիւն պատասպարէ եւ պաշտ-
պանէ ամեն բռնաւոր եւ նենգաւոր թշնամեաց
յարձակումներէն : Հայը՝ նկատած է զիւր կաթո-
ղիկոս անքուն զխոսակետ մը՝ եկեղեցւոյ բա-
րեկարգութեան եւ պայծառութեան վրայ հակող :
Հայը՝ նկատած է զիւր կաթողիկոսն հայրապետ մը ,
աստուածային գերդաստանին հոգեւոր մենդեան
եւ դարձեալ իմանալով իր իւր վրայ ա-
ռած : Հայը՝ նկատած է զիւր կաթողիկոսն ընդ-
հանրական Հովնապետ մը , բոլոր հովնաց արթի-
նութեան , զործունէութեան , բարոյականու-
թեան եւ անձնանուէր պաշտօնատարութեան
դասաւորանաւորութիւն իւր վրայ առած : Հայը՝
նկատած է զիւր կաթողիկոսն անվահեր անոյնեան
մը՝ արդարութեան եւ ճշմարտութեան երկասցի
արով զինուորած , իւր եկեղեցւոյ անբռնարբե-
լի իրաւանց եւ անկախութեան համար : Հայը՝
նկատած է զիւր կաթողիկոսն անձնազիր պաշտ-
պան մը կայսերաց թագաւորաց եւ իշխանաց
առջեւ , բանիւ եւ զրով իւր ազգի իրաւունք եւ
շահ պաշտպանող : Հայը՝ նկատած է զիւր կա-
թողիկոսն լուսոյ եւ շնորհաց պայծառ ջահ մը ,
որ համափրկու ճառագայթները տարածեր է ե-
կեղեցւոյ համայն որդւոց վրայ : Հայը՝ նկատած է
զիւր կաթողիկոսն միութեան եւ միոյ յողակապ
մը , որ Հայաստանի բոլոր դաւակաց ուժը բովան-
գակեր է իւր մէջ , եւ իւր մեծութիւնն նոյալ մէջ :

Այսպէս նկատած եւ ճանչցած է հայը զիւր
կաթողիկոսը եւ միշտ ջանք քած է համազգա-
յին ընտրութեամբ ընտրել , եւ համայն ազգի մէ-
ջէն ամենէն ընտիրն ընտրել , եւ իւր ընտրելոյն
ազգօգուտ շնորհք վայելել : Եթէ նախին դա-

րերուն մէջ այսքան փափուկ տեսութեամբ եւ
զգուշութեամբ կը մտադր ազգը իւր կաթողի-
կոսի ընտրութեան , եթէ նախին դարեւոր մէջ
մեր հայրերը այսքան կը կարօտէին ընդհանուր
Հայրապետի հակողութեան եւ պաշտպանութեան ,
մինչդեռ կը հակէր միւս կողմէն ժողովրդեան ամ-
բողջութեան վրայ միանգամայն հայկական թա-
ղաւորութեան հզօր բազուկը , եթէ այն ժամա-
նակ մեր նախնիք ընդհանուր հովնապետի մը
դաւաղանին ներքեւ տաղաւորիլ կը ցանկային ,
մինչդեռ իրենց հայրենեաց մէջ կը բնակէին , ու-
շափ եւս առաւել մեք՝ որ այսօր տարագիր եղած
ենք մեր հայրենիքէն եւ մեր միութեան միակ
կեդրոն մեր Ս . եկեղեցին եւ կաթողիկոսութեան
հաստատուն դահլ մնացած է մեզի : Ուրեմն լաւ
մտածենք այս փափուկ կէտին վրայ , Սրբազու-
մար ժողովականք , լաւ մտածենք ազգի եւ ե-
կեղեցւոյ կարօտութեան վրայ , եւ այնպէս ըղ-
ղուշութեամբ վարուինք ներկայ մեզմ դործոյս
մէջ :

Ազգային եկեղեցական վարչութիւն քայ-
քայտեմք , խռովութիւնք եւ անկարգութիւնք
յաճախած են ամեն վիճակաց մէջ . ով լինելու է
բարեկարգութեանց վերահաստատող եւ խռ-
ովութեանց խաղաղարար . — Կաթողիկոսն : Ազ-
գային կալուածները , վանքերը , մանաստանե-
րը հաւատարիմ անտեսութեամբ ապահովուած
չեն , եւ փոխանակ ազգին բարոյական եւ նիւ-
թական օգուտ մատակարարելու՝ օր աւուր եղծ-
ման եւ զեղծման ենթակայ կը լինին ի վնաս
ազգին , ով կարող է ազգային սեփականութիւն-
ները եւ հաստատութիւնները ապահովել յօգուտ
ազգի . — Կաթողիկոսն : Ազգը ամեն տեղ կարօտ
է դաստիարակութեան եւ լուսաւորութեան .
ով լինելու է լուսաւորութեան առաջնորդ , վար-
ժատանց եւ դպրեւանից պաշտպան , ուսումն-
նական խորհուրդներ հաստատող եւ տածող . —
Կաթողիկոսն : Ազգ այսօր կարօտ է իւր բաղ-
մատեսակ պիտոյից համար ազգային մատակի .
եւ ով կարող է համազգային դուժար մը կաղ-
մել եւ ազգային դաստիարակութեան պէտքեր
հոգալ . — Կաթողիկոսն : Կուսակցութեան եւ օ-
տարամիտութեան հոգին օր աւուր ազգերնուս
մէջ կը զօրանայ , պաղութիւն եւ անտարբերու-
թիւն կը տիրէ եկեղեցականաց եւ աշխարհա-
կանաց մէջ , կղերաց դասէն ոմանք պարտա-
զանցութեան եւ անհնազանդութեան կը դի-
մեն , ոմանք ինքննախի լինելով ապօրինաւոր
միջոյններով բարձրագոյն աստիճանաց կը ձգ-
տին . ոմանք զրգարաւորութեամբ հալածանաց
մատնուած թափառական կը գեղերին , ոմանց
անիրաւութիւն կը պաշտպանուի , եւ ոմանց
արդարութիւնն ռանակոխ կը լայն . ով պէտք է
որ այսքան աղետից առաջն առնելով ազգին
հաւատարմները վարձարէ եւ պարտազանց-
ները ուղղէ . — Կաթողիկոսն : Ազգ քննեց եւ ի-
մացաւ կաթողիկոսական վիճակը . մերժեց Պա-
լաժէնիայ անուն կարգադրութիւնը՝ որ մեր ե-
կեղեցւոյ ազատ տեսչութեան վտանգ կ'սպառ-
նար . ով պէտք է որ զործագրէ մերանական
իրաւունքները , Ազգը զօրացնելով եկեղեցական
ամուր տեսչութեամբ , եւ տեսչութիւնը զօրա-
րացնելով ազգայնոց զործակցութեամբ . ով
պէտք է համազգեղէ ազգին զօրութիւնը եկե-
ղեցւոյ մէջ , եկեղեցւոյ զօրութիւնը ազգին մէջ .
— դարձեալ կաթողիկոսն : Վասն զի կաթողիկո-
սին կը հաւատայ ազգ՝ իւր եկեղեցւոյ ընդհա-
նուր տեսչութիւն . Կաթողիկոսն է որ կերպնու
եւ կուսակէ անարատ ու անխախտ պահել մեր
Հայաստանեայց Ս . եկեղեցւոյ վարդապետութիւն-
ները եւ աւանդութիւնները : Ահա այսչափ մեծ
եւ նուիրական է Կաթողիկոսի ընտրութիւն եւ
կոչումն :

Ուրեմն ոչ թէ միայն ազգ , այլ թէ ընտ-
րեալն իսկ՝ իւր աստիճանի բարձրութիւն , իւր
պարտաւորութեանց խորութիւն , իւր իրաւանց
լայնութիւն , եւ ասպարիզին երկայնութիւն ճանչ-
նալու է . որով կարողանայ գործել դարձման յօ-
գուտ լրութեան ազգիս , եւ իւր բարի օրինա-
կով ի գործ հրաւիրել զբովանդատիկոս Ս . ե-
կեղեցւոյս :

Մոռցայ ըսելու սրբազուժար ժողովոյդ , որ
կաթողիկոսական խնդիրն յուղուած օրէն մինչեւ
ցարդ քանի մը քաղաքական եւ եկեղեցական
խնդիրները իրարմէ հորոշող անձինք այն ինչ
կամայն ինչ տէրութեան կողմանէ փանտաբան
կըլլան , հարադուշակ խորամանկութեամբ ըս-
պանալիքներ երազելով ազգ իւր սեփական ի-
րաւանց պաշտպանութեանէն յետոյ կասեցնելու :
Բայց , քանի որ հովնաւոր պետութիւնները կը-
րօնական ազատութիւն կը քարոզեն , եւ քանի
որ մեր եկեղեցին իւր սկզբնաւորութեան օրէն
իւր անկախութիւն իւր առաքելական լաւանգ
պահելով մեզ հասուցած է , ով պիտի լաւանա-
րար լինի ազգին եւ իւր կաթողիկոսին նոյն ան-
կախութիւն պաշտպան եւ յարատեւ պաշտպա-
նելու , ոչ ոք . ուստի եւ ազգը բոլորովին ապա-
հով է , որ իւր եկեղեցական վարչութիւն ազատ
է օտարներու միջամտութենէն . վասն զի նորա
իրաւունքները մանջնաւոր եւ յաւիտեական
են , քանի որ արդարութեան վրայ են հիմնուած :
Ահա այս պատճառաւ է որ ազգը մերժած է Պա-
լաժէնիայի կարգադրութիւն , եւ նորընտիր Կա-
թողիկոսի առաջ Հայրապետական նախնի իրա-
ւունքները դրած է : Ուրեմն՝ բաւական է մի-
այն որ նորընտիր հայրապետ ազգի մերժածն
մերժէ եւ ունեցածն վերահաստատէ , քաջ ի միտ
առնելով , որ բարձրացած դահլ ոչ միայն իշխա-
նութեան դահլ է , այլ տեղի պարտոյ կատար-
ման եւ սեղան անձնադիր դոհողութեան ի սէր
ազգի եւ եկեղեցւոյ :

Այսպէս ահա աչքի առաջ ունենալով այս
ամեն պարագաները , արդարութեամբ եւ սուրբ
խղճիւ պարտաստեմք ընտրելաց ցանկն՝ առա-
ջարկելով Կեդրոնական ժողովոյ հանրական ընտ-
րութեան . յայտնենք միանգամայն որ սուրբ եւ
նուիրական է մեզի համար եկեղեցւոյ ազատու-
թիւն եւ կաթողիկոսական իրաւունքները , սուրբ
է ազգը եւ նորա օգուտն , եւ այս սրբութեան
համար մենք պարտաստ եմք մեր նորընտիր հայ-
րապետին ամեն ազգօգուտ ձեռնարկութեանց
օժանդակել . վասն զի այս է մեր ուխտ եւ կո-
չումն , եւ այս է մեր պարտաւորութիւնն առա-
ջի Աստուծոյ եւ առաջի Ազգին :

1866 յուլիս 12 .

Երեմի Լուսին

ԴՐԱՄԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՏԻՄԱԿԱՆ

Կ . Պօլիս 13 յուլիս :

Չորս օրէ ի վեր հրապարակա դարձ-
եալ յուզման մէջ է , բայց ոչ թէ զիններուն
անկման՝ այլ երեւելուն պատճառաւ : Մոյն
իսկ շարաթ օրէն սկսեալ Պօլսոյն մէջ ար-
ժէթութեքը շուտ շուտ երեւ սկսան , եւ
նոյն իրիկուն՝ արժէթութեք զիններն 32ի հա-
սան : Հետեւեալ օրերն Եւրպայէն եկած
հեռագիրները՝ որք զինները մինչեւ 281/2—
281/2 կը ծանուցանէին , այս տեղ ուլ ար-
ժէթութեք տեւիլ հաստատութիւն տուին եւ
առնուները շատցան : Օննապագայն ու
հաշտութեան յոյսերն ալ առնուներուն նը-
պատաւոր ըլլալով , զիններն աւելի բռնուե-
ցան եւ ձգեղու փորձերը չկրցան յաջողիլ :

Բայց այս դէպ ի վեր փոփոխութեան
ստոյգ պատճառը փնտելով՝ Եւրպայեան
քաղաքականութեանէն զատ ուրիշ բան չենք
գտներ : Պօլսաներուն մէջ արժէթութեք
զինները բարձրացնողները երբոր կը նային որ
քաղաքականութիւնն այսօր քիչ մը ազգի է ,
շուտով զինները հանենք կրքն եւ կենէ .
վաղը կը տեսնեն որ քաղաքականութիւնը
քիչ մը շփոթ է , շուտով զինները ձգենք կը-
սեն ու կիջնեն : Պարզ շահադիտութիւն մը
Եւրեմի տլ կը պատահի որ սուտ լու-
րեր կը հանեն կամուկնէ բանի մը մեծ կա-
րեւորութիւն կուտան՝ խաղին բաղդն իրենց
կողմը դարձունելու համար : Եւսով երբեմն
կը շահին , երբեմն ալ իրենք խաբուելով
կը վնասին :

Ըստ համար թե և Օսմանեան արժէ-
թուղթերն այսօր բարձրացան, վասն զի պա-
տերազմող տէրութեանց հաշտութեան յոյս
կայ, զարմանք չէ որ վաղն ի յնան՝ եթէ ներ-
քին կամ արտաքին աննպաստ պարագայ մը
մէջ գաղով գիները կտորէ։ Կերքին կա-
ցութիւնն փնջ որ է, մի և նոյն է, գանձը
նեղն է։ Իսկ թիւրքի լրագիրն իսկ կը խոս-
տովանի զայս իր երէկուան թուով, և կը
ցաւ ի որ արժեթղթի ներկայ վար գիները
100/ն 18-ամիս բերելու և պատճառաւ երկ-
րին դրամագլուխը կը քաշուի, վասն զի շա-
տերը գործի մէջ այսչափ բարձր շահ չկը-
նալով գանձը՝ արժեթղթով կառնուին ի
փնջս վաճառականութեան և երկրագոր-
ծութեան։

Քիչք է Լա թիւրքի դատարանի
նը. բայց այս լրագիրն ուրիշ բան մ'ալ կը
յայտնէ. Գանձային ներդրութիւնները փա-
րատելու համար հետեւեալ երեք միջոցները
կը խորհուրն եղեր. 1. նոր արժեթղթեր
հանել 0/0 5 շահով. 2. թղթագրում հա-
նել. 3. տէրութեան ամեն պարտուց տա-
րեկան վճարումները դադարեցնել առանց
բացատրութեան. Լա թիւրքի կը յարէ թէ
առաջին միջոցը մեծ փնջներու պատճառ-
կրնայ ըլլալ՝ առանց բացատրեալ արգասիքն
յառաջ բերելու. երկրորդ միջոցը բոլորովն
կը դատապարտէ, և երրորդը այսինքն տե-
րութեան պարտուց տարեկան վճարումը նա-
խաձեռար կը համարի։

Նոր Լեզնթ-Հէրըլտ թղթագրում
հանելու խոստ կուտայ, և Լա թիւրքի
ալ պարտուց տարեկան վճարումները դադ-
րեցնել կառաջարկէ, և ամենն ալ գան-
ձային ներդրութիւնները չեն ուրանար, բնա-
կանաբար կը հետեւի որ կառավարութիւնը
հարկաւ մէկ կամ միւս միջոցը պիտի վեր-
ջապէս գործադրէ. Իսկ մեր տփար դատա-
ղութեան գաղով, այս միջոցներուն և ոչ մէ-
կը կրնայ բաղձադեալ արգասիքն յառաջ բե-
րել. եթէ թղթագրում կամ նոր արժե-
թուղթ ելնէ, տէրութեան վարկին մեծ վը-
նաս տալէ դատ՝ շատ չեղթար գանձը դարձ-
եալ. ներդրութեան մէջ կիցնայ քանի որ այս
կերպով երկրին հարստութիւնը օր քան զոր
պահելու վրայ է. իսկ եթէ տէրութեան
պարտուց վճարումները դադարին, թէպէտ
աւելի շահաւոր կ'ըլլենք, բայց Օսմանեան

վարկը բոլորովն կը վերնայ.
Սակայն թէ որ ներքին է մեր կարծիքն
երկու խօսքով յայտնել, ամեն միջոցներէ
նախաձեռար համարելէ՝ ելնողական վիճա-
կը բարեկարգել, ծախուց մէջ հիմնական խը-
նայութիւններ մնայնել, եկամուտներն աճե-
ցնելու ձեռք գալնէլ թէ՛ օտար և թէ՛ տե-
ղայի բնկերութեանց արտօնութիւններն առ-
լով, և այլն և այլն. Ըսոյց վրայ թերեւս ու-
րիշ անդամ ալ խօսելու առիթ կուենանք։

Մարտի 11 յուլիս.

Մետաքսի խաղի. — Ա. եւեթիկը Գաղ-
ղից արուելուն համար ծագած խաղաղու-
թեան յոյսերուն պատճառաւ բարձրացած
գիները նոյն վիճակին մէջ կը շարունակեն.
Բայց եթէ քաղաքական անտուգութիւնը
չըլլար, ապրանքին վիճակը լաւագոյն պիտի ըլ-
լար. Ծախուածներն են 11 հ. Պրուսացի
ֆիւ. քիւրկումը 90 ֆր. 8 ս. Արա 87-
90 ֆր. 20 լիւլէ պարսկապան 55 58 ֆր. .
Իսանդակ. — Իւլէ գործ. կայ և գինե-
րուն մէջ գգալն փոփոխութիւն մը չկայ.
Ժիւլմէ 50 քիւրկումը 200 255 ֆր. Թ. ար-
տաւ 140 ֆր. Տրապիզոն 120 122 50 ֆր.

Բուրգ. — Խաղաղութեան յոյսերը գի-
ները քիչ մը հանեցին, բայց հիւսն անցեալ
շարաթիւններն աւելի հանդարտ են. Իւլիքի
բարակ չաւացուած բուրգ 115 ֆր. Սիւա-
նիի 120 ֆր. գորշ և սև 80 ֆր. 50 քիւլ.
12 0/0 սքոնթօ.
Հարթ. — Իւլէ գործ կայ. Փշուած
30 50 ֆր. գլուխ 3 քիւրկումնոյ 42 ֆր.
4 քիւրկումնոյ 40 50 ֆր. 100 քիւրկումը.
11/2 սքոնթօ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ռ Ո Ւ Ս Ի Ը

ԵՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ՀԱՅՈՑ

Գրեալ Պ. Ճանիկ Արամեան

Ար ծախուի Փարիզի գրատուէր Ուզուն
Չարը թիւ 400.

Գին 3 զւարուշ.

ԾԱՆՈՒՑԱՌՈՒՆԲ

Հայագիր պարկիշտ երկուստարգ մը որ
հայերէն, գաղղիերէն, տաճիկերէն և յունա-

րէն լեզուաց հմտութիւն ունի, պատուա-
ւոր ամս մը մէջ ֆրանսի վարժարան ըլլա-
լու յոժարութիւն ունի. Ուզողը լրագրոյս
գրատնեակէն կրնայ տեղեկութիւն ատանալ

Ֆրանսերէն լեզուի դաստիարակութեան
մէջ վարժ և փորձառու մէկը որ ուրիշ ան-
գամ բուսական երկար ժամանակ վարած է
նոյն պաշտօնը, այս անգամ ալ՝ դասարան
մը պիտի բանայ շուկայի քով յարմար տեղ
մը, եթէ գէթ քանի մը ուսանողներ գրա-
նուին. Դաս արուելքներն են՝ Ֆրանսերէն
և Տօմարագիտութիւն. Ուզողը կրնայ դի-
մել լրագրոյս գրատնեակը կամ մեր գոր-
ծակալ Պ. Յարութիւնին. Փարիզի գրա-
տուէր, Ուզուն-Չարը փողոց թիւ 400.
Մարգարեան Յարութիւն արայի գրատու-
նը Մէրճան-Չարը թիւ 84.

Մուկ (Թահապոյթի) յու (փրէ) ցեղ(կիւլէ)
մծգուկ (սիւլիւրմէկ) կարծեւ և ուրիշ ճճիւնքը
ջարդող միակ գեղ.

Լեզբանդարացի Պ. Թադէոս Նե-
րաճեանցի գործարանէն ելած և մեծ համ-
բաւ ստացած է Եւրոպոյ մէջ.

Ըյս փոշին արդէն Մայրաքաղաքին փո-
ղոցներուն մէջ վաճառուիլ սկսած է ժամա-
նակէ մ'ի վեր, բայց զանր բերել տուող վաճա-
ռականն իմանալով որ փողոցներուն մէջ փա-
ճառողներէն ոմանք շահասիրութեամբ օտար
նիւթեր խառնէր են անոր մէջ, որով գեղին
ապագութիւնը կը տհարանայ և յարգը կը
կոտորի, որչաժ է ինքնին վաճառել զայն իր
սե նեկին մէջ, և կամ պատուաւոր ու վրա-
տահելի խառնութիւններու միայն տալ. Ուս-
տի կը ծանուցանէ հասարակութեան որ
փողոցներու մէջ ծախուածներուն չփաս-
հին, այլ երթան թահալը Լեզնթ թիւ 42
մայրաքան, Չիլիկ խանը վերի յարկը թիւ 6
և Ուզուն Չարը Չարը քիւրկումնոյ մէջ
Միկհայր աղա խանը վերի յարկը, թիւ 3
սենեակները, և այն տեղերէն՝ դնեն.

Գործածութեան եղանակն է՝ զիշեր-
ները ննջելու ժամանակ անկողին բոլորաբը
յանել. Ուզողը կրնայ անկողին մէջ ալ ցա-
նել, ըստ որում ամենն ին փնջս չընէր մար-
դու.

Ա Ռ Ե Ի Տ Ր Ա Կ Ա Ն

ԴՐԱՄՈՑ ԱՐԺՈՂՈՒԹԻՒՆԸ

ԿՈՍԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ	Երեքշաբթի	Չորեքշաբթի
14 ՅՈՒԼԻՍ	42	43
Օսմանեան լիրա Մէճ. . .	403	403
Բաւնոյ արծաթ . . .		
Եօհամը ունուժի . . .	31.10	31.10

ԿՈՍԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 14 ՅՈՒԼԻՍ

Ա Ր Մ Տ Ի Ք

Ջորեն Թայդան կարծր	—
» Իսմայիլ »	—
» Բոււ. Պալլէք	24—26
» Վանա	23—26
» Իսթրայիլ կաղուղ	18—22
» Կալայ »	20—24
» Պուրկաղ »	23—23
Եղիպտացորեն կալայ	—
Գարի	10—11

Մ Ե Տ Ա Ք Ս

Պրուսա կարծ թէ ֆէ	60—570
» երկան »	530—540
Շաքի հօխան ֆրանք	56—60
» Պարկաւ »	—

ՆԵՐՔԻՆ ԲԵՐՔ

Բաւալակ Պարքէտէր	Հօխայ	Գուրուշ
» Կէյվէ	»	—12
» Ասանա	»	—13.10
» Ուստատան	»	—12
» Բուրգ Լեկիւրի լուացուած	»	—11
» » չլուածուած	»	—16.20
» Պարքէտէր չլուաց.	»	—8
» Պարքէտէր չլուաց.	»	—8.20
» Բոխաւ	»	—14
» Թոխաւ	»	—12
» Զորոււ	»	—11
» Մաղը սիւ	»	—13
» Ճերմակ	»	—7
» Թիֆլիս Լեկիւրիւ	»	—40
» Թիֆլիս Պարքէտէր	»	—190
» Բիթլէ Տիւրք բանուած	»	20—24
» Սալայ Տաճկաստանի	»	—13
» Միդրամուդ զեղին Տրապիզոն	»	—20
» » Անատոլու	»	—19
» Առաւած Բոււլէլի	»	—
» Կաւաւաթի հունա Բոււլէլիի Բիլէ	»	—
» » Պանարմա »	»	—
» Զէթ Ալիպըղ	»	—7.20
» Կիլիս »	»	—7
» Աճառ (Սապօն) Գանալու »	»	—6.20
» » Միտիլի »	»	—5
» Բրինձ Եղիպտոս Բէլիս »	»	—4
» Տիւնալ »	»	—

ԱՐՏԱՔԻՆ ԲԵՐՔ

Խաճկէ Ռիո և Գափի 100 հօխան	Գուրուշ
930—1030	
Շաքար զլուխ 6 10 Լու. կնայ. »	—
» Չոյ. գլուխ » »	—290
» Փոշի » »	—248
» Գաղղ. գլուխ » »	—280
» Փնշի » »	—240
» Անաղ (զարայ) » »	—670
» Պարկի (պիկէ) » հօխայ	—6
» Լեզնթ (չիլիս) Պէնկալա »	—133
» » Մաւրաս »	—120
» Անուշար (Նոշար) »	—620
» Պարկիս (Զէլիք) » անուղի	—180
» Կապար (Զաւրու) »	—30
» Թիլիկ (Թիլիքէ) զոյղ անու. »	—340
» Զինք տախտակ թիւ 7—12 շիյ »	—60
» Երկաթ Անգ. Տոգաճիւ կնայ. »	68—70
» Բեւեղու »	72—73
» Բոյրակ »	133—140
» Ուստոյ »	120—130
» Գարֆիճա վարի 39 շիյ. »	—98
» Խոթիւպէճ ճէն. զոյղ »	—230
» Սրաւաշէթ վիլնիս » հօխան	—15
» Թրիւսու և Գաղղ. »	—14

Իմրակիւ-Տօքլէ

Կ. Ս. ԻԹԵԻԹԵԱՆ

Ի ՏԳԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ ԼՐԱԳՐՈՑ

Ե. ՊՈԼԻՍ ԶԵՆԻԹԻԱՆ